ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

11.07.2019
342-64

Երևանի քաղաքապետ
Հայկ Մարությանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարության,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել Armdaily.am լրատվական կայքի լրագրող Դուսյա Ղազարյանը և խնդրել աջակցել իրեն տեղեկատվություն ստանալու հարցում:

Քաղաքապետ Հայկ Մարությանը պաշտոնատար անձ է, և նրա անձի վերաբերյալ տեղեկատվությունը հանրային հետաքրքրություն և հանրային կարևորություն ունի: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ հարցմամբ պահանջող տեղեկատվության տնօրինողը հենց Երևանի քաղաքապետն է, ուստի հարցումն ուղղվում է քաղաքապետին:

Նշենք նաև, որ տվյալ հարցմամբ պահանջող տեղեկատվության վերաբերյալ քաղաքապետը հրապարակավ հայտարարություն արդեն իսկ արել է «Ազատություն» ռադիոկայանի եթերում: Ուստի, համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկատվությունը. Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

1. Ո՞ւնեք արդյոք երկքաղաքացիություն:
2. Քաղաքապետի պաշտոնը ստանձնելուց հետո հրաժարվե՞լ եք արդյոք Չեխիայի Հանրապետության քաղաքացիությունից:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝ ԻԱԿ նախագահ

Շուշան Դոյդոյան